Հույս աշխարհի համար

Անցած դարի սկզբից ամբողջ աշխարհում միլիոնավոր երիտասարդներ ներքաշված էին պատերազմների մեջ և մահանում էին ՝ հույս ունենալով վերջ դնել բռնությանը և աշխարհը ազատել վախից: Սա վեհանձն նպատակ է: Թվում էր, թե այն գրեթե ձեռք է բերվել, բայց ճապոնական քաղաքների վրա նետված ատոմային ռումբերը մարդկանց սրտերը լցրեցին առավել մեծ սարսափով: Այդ ժամանակից ի վեր ձեռնարկված ջանքերի ձախողումները ավելի շատ են ուժեղացնում վախը և տանում ևս մեկ գլոբալ բախման: Այդ վախի համար առկա են իրական հիմքեր, քանզի ամբողջ աշխարհին հայտնի է, որ ատոմային հակամարտությունում չի կարող երաշխավորված լինել որևէ ժողովրդի անձեռնմխելիությունը: Անգամ Միացյալ Նահանգների քաղաքները հեշտությամբ կարող են դառնալ ավերակներ:

Ինչպես բոլորն են հասկանում, այն կարող է բերել մարդկային կյանքերի հսկայական կորուստների, բայց քաոսի հետևանքները կլինեն առավել սարսափելի, քանզի նրանք կխանգարեն օգտվել աշխարհում տնտեսական կայունության գոնե մասնակի վերականգնման հնարավորությունից:

Չկան ակնհայտ լուծումներ

Այսօր աշխարհը ցնցած վախի պատճառը խորը արմատներով գնում է դեպի մարդկության առաջնորդների կողմից՝ խնդիրների լուծման անհաջող փորձերի:Կար ժամանակ՝ նախքան Առաջին համաշխարհային պատերազմը, երբ ամբողջ երկրի իմաստուն մարդիկ ժողովուրդներին ասում էին, որ մարդկային ցեղը էվոլյուցիոն գործընթացում հաստատորեն բարձրանում է քաղաքակրթության առավել բարձր աստիճանի, և որ շուտով պատերազմները կդառնան անցյալի սեփականություն: «Աշխարհն դառնում է ավելի լավը, - ասում էին նրանք, - և շուտով մեզ մոտ կիրականանա խաղաղության և բարօրության ուտոպիան, որի մասին երազում էին մարգարեները և որի մասին գրում էին պոետները»:

Ի ապացույց այն բանի, որ ապագայի այդ լուսավոր հույսը արդարացված է, մեզ հիշեցնում էին կրթության առաջընթացի մասին և ասում, որ լուսավորված աշխարհին հայտնի են պատերազմից տարբերվող միջազգային հակամարտության կարգավորման լավագույն միջոցները: Մեր ուշադրությունը կենտրոնացվում էր գիտական հաջողությունների վրա. որ նրանք նույնպես կնպաստեն ժողովուրդների միջև երկարատև խաղաղության հաստատմանը:

Մենք շատ լավ գիտենք, որ այս և շատ այլ պնդումներ, որոնք կատարվել էին Առաջին համաշխարհային պատերազմից առաջ, անհաջողության են մատնվել: Այդ անհաջողությունների

սարսափելի իմաստը մարդկության համար միանգամից չէ, որ պարզ դարձավ: Առաջին գլոբալ կոնֆլիկտում ներգրավված տարբեր ժողովուրդների քարոզչամեքենաները այնպես կարողացան անել, որ մարդկանց ուղեղը հնարավոր եղավ հեռացնել այն անկասկած փաստից, որ աշխարհը սկսել է մոտենալ իր վերջին: Մեզ օրինակ ասում էին, որ պատերազմը սանձազերծվում է այն ժողովուրդների կողմից, որոնք չունեն կառավարման ժողովրդավարական ձև, և որ նման արհավիրքի կանխարգելման համար մենք պետք է պատերազմը հասցնենք մինչև տանջալից ավարտ, որպեսզի աշխարհը փրկենք ժողովրդավարության համար: Այն լավ էր հնչում, քանի որ բոլորը ցանկանում էին տեսնել ժողովրդավարության համար փրկված աշխարհ, քանզի վերջ ի վերջո ժողովրդավարությունը մարդկանց հայտնի կառավարման լավագույն ձևն է: Բայց աշխարհը ժողովրդավարության հանդեպ ընկալունակ չեղավ: Դրա փոխարեն եվրոպական երկրների մեծամասնությունը դիկտատուրա ընդունելու պատրաստակամություն դրսևորեց: Առաջին համաշխարհային պատերազմի կողմից կատարված միակ իրական փոփոխությունը կայանում էր նրանում, որ իշխանությունը ժառանգաբար փոխանցող դինաստիաները իրենց տեղը զիջեցին դիկտատորներին, ովքեր անհամբերությունից այրվում էին, որպեսզի աշխարհը նոր պատերազմի մեջ ներքաշեն: Իրականում ժողովրդավարական ուժերը կորցրեցին հողն իրենց ոտքերի տակ, և շատ անսպասելիորեն անգամ Միացյալ նահանգներին սկսեց սպառնալ դիկտատուրան. գոնե

այդպես էին ասում քաղաքական գործիչները: Ամեն դեպքում աշխարհն ժողովրդավարության համար չդարձավ ազատ:

Կրթության, գիտության և կրոնի ուժերով հնարավոր չեղավ կանխել երկրորդ գլոբալ կոնֆլիկտը անգամ ամբողջ սերնդի կտրվածքով: Մեզ ասում էին, որ աշխարհում, ուր չկա կարիք և վախ, ուր առանձին անհատներն ու ամբողջ խմբեր ունեն ազատություն արտահայտել և հրապարակել այն, ինչ իրենք մտածում են, ամենը կսկսի ծառայել մարդկանց լավագույն շահերին, և պատերազմի ոչ մի առիթ չի լինի: Այսօր մեզ ուրախացնում է անգամ անկայուն խաղաղության առկայությունը, բայց այս աշխարհին մի կողմից սպառնում է երկրի բնակչության զգալի հատվածի սովը, իսկ մյուս կողմից այն փաստը, որ շատ երկրներ ունեն անկայուն տնտեսություն, որի պատճառով նրանց փոխադարձ կասկածամտությունը և անհասկացողությունը հանդիսանում են պատերազմի սերմեր: Մինչդեռ արագորեն աճում է վախը, և անգամ ամենաբարեկեցիկ երկրները հարկադրված են կրել հսկայական ռազմական ծախսերի բեռը՝ նպատակ ունենալով կանխարգելել, ինչպես նրանք են հայտարարում, ագրեսիան և պատրաստվել պատերազմի, երբ այն անխուսափելի կդառնա:

Մեր օրերը մարգարեությունում

Չնայած վախի և տառապանքների այդ ժամանակաշրջանը աշխարհ եկավ անսպասելի և արագ զարգացող քաղաքակրթության ցանկություններին հակառակ, այն

անսպասելի չէր նրանց համար, ովքեր ջանադրաբար ուսումնասիրում են Աստվածաշունչը, քանի որ այդ ամենը նրա էջերին կանխագուշակվել էր Աստծո կողմից ներշնչված մարգարեների կողմից: Դանիել մարգարեն օրինակ կանխատեսել է մարդկության համար փորձությունների այդ ժամանակաշրջանը և այն նկարագրել է որպես «ծանր ժամանակներ, որը չի եղել այն ժամանակներից, երբ գոյություն ունեն մարդիկ» (Դանիել 12:1): Հիսուսը հիշատակեց Դանիելի այդ մարգարեությունը և բացատրեց, որ այն կիրականանա իր Երկրորդ Ներկայության և դարաշրջանի ավարտի օրերին:

Նա նշեց այդ ծանր ժամանակների մի քանի տարրեր, ասելով, որ երկրում կլինի «ժողովուրդների հուսահատություն և տարակուսանք, և որ մարդկանց սրտերը կ'նվաղին վախից եվ այն բաների սպասելուցն, որ բոլոր աշխարհքի վրա պիտի գա» (Ղուկաս 21:25,26): Մարդկանց սրտերը լցված վախի՝ Հիսուսի կողմից հիշատակումը բավականաչափ պարզ մատնանշում է, որ Նա ի նկատի ուներ մեր ժամանակը, քանի որ վախը երբևէ այսքան մարդու չի ներգրավել այնպես, ինչպես այսօր է: Երբ Հիսուսն ասաց, որ երկրի վրա կլինի ժողովուրդների հուսահատություն և տարակուսանք, Նա համեմատեց այն ծովի ալիքներին գոչյունի հետ:Սա շատ հարմար խորհրդանիշ է ժամանակակից մարդկանց անհանգիստ և դժգոհ զանգվածներին նկարագրելու համար, ովքեր փորձում են կանխարգելել դատարկությունը, որը վախի ազդեցության տակ կտանի մարդկային եսասիրության բոլոր ալիքները:

Դավիթ մարգարեն նույնպես կանխագուշակեց այն ժամանակի մասին, որում մենք ապրում ենք: Նա նույնպես համեմատում էր աշխարհի քաոսը ծովի և ալիքների անդադար բաբախյունի հետ, այսինքն մարդկանց և ժողովուրդների բարձրագոչ պահանջների հետ, ովքեր դեմ են դուրս եկել քաղաքակրթության պատվարների առջև, որը իրեն անխոցելի էր համարում: Դավիթի մարգարեությունը հասցեագրված է նրանց, ովքեր հավատում են Աստծո Խոսքին, և նրանց նա կոչ արեց. «Սրա համար չենք վախենալ՝ թէեվ երկիրն անցնի, եվ սարերը ծովին մէջ տեղը գցվին: Թող գոռան եվ եռան նրա ջրերը. Թող սարերը դողդողան նրա ուռենալովը» (Սաղմոս 46:2,3):

«Չենք վախենում», - հռչակում է մարգարեն: Որպես քրիստոնյաններ՝ մենք չպետք է վախենանք նրանից, ինչը սպասվում է երկրին, այսինքն մենք չպետք է վախենանք նրանից, ինչի հետ մենք ծանոթացել ենք աստվածաշնչյան մարգարեություններից և որին մենք հավատացել ենք այսօրվա և վաղվա օրվա իրադարձությունների հետ կապված: Աստվածաշնչի մարգարեությունները իրենց մեջ բովանդակում են ներկայիս աշխարհի խառնաշփոթության պատճառների միակ ճշմարիտ բացատրությունը և կրում են մթության և վախի ներկայիս ժամանակաշրջանի բարենպաստ ավարտի միակ հույսը:Մարդկության ճակատագրի հետ կապված աստվածային ծրագրի իմացությունը լցնում է մեր սրտերը խաղաղությամբ և ուրախությամբ, չնայած այն վախին, որով մենք շրջապատված ենք: Բայց ինչպիսի՞ն պետք է լինի վախի և անհանգստության

այս ողբերգական ժամանակաշրջանի ելքը՝ ըստ Աստվածաշնչի:Ասում են, որ ներկայիս ժամանակաշրջանը ճակատագրական է: Լիովին ճիշտ է, բայց ճակատագրին իշխում է Աստված, և Նրա մասնակցությունը իրադարձություններին այնքան հեռահար է, որ մեր՝ նրան հասնելու ձգտման երևակայությունը գրեթե անզոր է դառնում: Կարճ ասած, փաստերը, ինչպես նրանք շարադրված են Աստծո Խոսքում, այսպիսին են.

Մենք Աստծո ծրագրում հասնում ենք որոշակի ժամանակաշրջանի ավարտի: Ավելին, մենք հասնում ենք աշխարհի վերջի: Բայց այն չի լինի երկրի ավարտ, ինչպես շատերը սխալմունքով ենթադրում են (ժողովող 1:4), այլ կլինի երկիրը՝ հակառակորդի կողմից ղեկավարելու ավարտ, որը կփոխարինվի Քրիստոսի կառավարումով:

Նրա ներկայության նշանները

Երբ Հիսուսը խոսում էր մեր ժամանակների նշանների մասին, ասելով, որ այն կլինի ժամանակաշրջան, երբ մարդկանց սրտերը լցված կլինի վախով, Նա դա ասաց ի պատասխան այն հարցին, որը նրան տրվեց Իր աշակերտների կողմից: Հարցն այսպիսին էր. «Ո՞րն է քո գալստի և աշխարհի վերջի նշանը» (Մատթեոս 24:3): Սակայն աշակերտները նրա մասին չէին հարցնում, թե ինչպես նրանք կարող են իմանալ այն ժամանակների մոտենալու մասին, երբ կվերադառնա Քրիստոսը, այլ ավելի շուտ ինչպես իրենք կարող են իմանալ, որ Նա արդեն վերադարձել է:

Ուսուցչի պատասխանը այդ հարցին կրում է միակ արժանահավատ բացատրությունն այն վիճակի մասին, որում գտնվում է ժամանակակից աշխարհը և գալիք լավագույն օրերի միակ, իրական հույսը: Նա ցույց է տալիս, որ մենք մոտ ենք ներկայիս դարաշրջանի ավարտին: Այն իր հերթին նշանակում է, որ մոտ է Աստծո Խոսքի բազմաթիվ կանխատեսումների կատարման ժամանակը, որոնք խոսում են խաղաղության, ուրախության և կյանքի հաստատման մասին, որոնք հասանելի կլինեն մարդկությանը Քրիստոսի հազարամյա կառավարման արդյունքում:

Սա չի նշանակում, որ Հիսուսը երկրի վրա կկառավարի որպես մարդ: Առաջին անգամ Նա երկիր է եկել որպես մարդկային էակ, որպեսզի, ինչպես Ինքն ասաց, Իր մարմինը տա մահվան հանուն աշխարհի կյանքի (Հովհաննես 6:52): Հետո Իր, որպես մարդկային արարածի, Գողգոթայի խաչին զոհաբերումով մահից ազատվելու միջոցներ տրամադրելով՝ Նա վեր է հառել հանգուցյալներից՝ որպես փառահեղ աստվածային էակ, ով ունի նույն բնությունը, ինչը և Արարիչը:

Աստծո Խոսքի որոշ մարգարեությունների ծայրաստիճան բառացի մեկնաբանությունը առաջացրել է Քրիստոսի Երկրորդ Գալստյան խիստ չմտածված գաղափար: Որոշները ենթադրել են, որ երբ Նա վերադառնա, Նրան կարելի կլինի տեսնել որպես մարդու, ով ճախրում է երկնքում: Միաժամանակ տեղի կունենան սարսափելի ցնցումներ բնության մեջ՝ երկնքում և

երկրում, որոնք կավերեն այն ամենը, ինչը մարդուն հնարավոր է եղել երբևէ ստեղծել, անգամ ատոմային ռումբը:

Մենք սակայն, տեսնում ենք, որ մարգարեությունները, որոնք օգտագործվում են իրենց կողմից որպես հիմք, այդ սխալ գաղափարի համար, ցույց են տալիս մեր քաղաքակրթությունը ձևավորող, մարդու կողմից ստեղծված հաստատությունների ցնցումների խորհրդանշական նկարագրությունը: Մարգարեությունները նկարագրում են այն՝ որպես դարաշրջանի ավարտ, այլ ոչ թե որպես աշխարհի վերջ, և որպես այն ամենի ավարտ, ինչը Պողոս առաքյալը անվանում է «ներկա չար աշխարհք» (Գաղատացիս 1:4): Հիսուսը սատանային անվանեց «այս աշխարհի իշխան», որի համար էլ աշխարհի վերջը նշանակում է սատանայի կայսրության ավարտ, նրա գերակայության ավարտ մարդկանց հոգիների և սրտերի հանդեպ (Հովհաննես 12:31):

Ամեն մի քրիստոնյա պետք է ուրախանա, նկատելով ցանկացած նշաններ, որոնք ցույց են տալիս, որ այս աշխարհի ավարտը մոտ է: Բոլոր մարդիկ կցնծան, երբ հասկանան, որ սատանայի աշխարհը ավարտվում է, քանզի նրանց մոտ կհայտնվի հնարավորություն դառնալու նոր աշխարհի քաղաքացիներ, ոչ թե մարդու կողմից ստեղծված ևս մեկ քաղաքակրթության, այլ նոր կարգերի, որում կլինեն Քրիստոսի արքայության իշխանությունն ու օրենքները:

Աշխարհն, որ այսօր արդեն մոտենում է իր վերջին, երբեք բավարարում չի բերել անգամ նրանց, ովքեր մեծ

խանդավառությամբ ձգտում էին երկարաձգել նրա գոյությունը: Իհարկե, նրանում էլ կային շատ լավ բաներ, բայց ամեն դեպքում գերակայում էին մեղքը և չարությունը: Հիվանդությունները, տառապանքները և մահը հանդիսանում էին նրանց սարսափելի սեփականությունը, իսկ ատելությունն և պատերազմները քանդում էին մարդկանց երջանկությունը և վերացնում էին խաղաղությունը ժողովուրդների միջև:

Վախը, որը կար ներկայումս և ապագայում գալու են ավելի վատ իրադարձություններ, նրա բնակիչներին զրկում էր ուրախությունից: Իրապես, ինչպես ասում է Սուրբ Գիրքը, այն չար աշխարհ էր, և որքան մենք ուսումնասիրում են նրա նախանշանները, այնքան ավելի ենք համոզվում, որ Հիսուսը գիտեր, թե ինչի մասին էր խոսում, երբ սատանային անվանում էր այս աշխարհի իշխան:

Այո, մենք բոլորս ուրախ ենք, որ այդպիսի աշխարհը մոտենում է իր ավարտին, և որ, ինչպես ասում է Գիրքը, նրա կառավարիչը կկապվի և վերջնականորեն կվերանա: Հիսուսը ասել է, որ այդ ժամանակներում ապրողները և Նրա Խոսքին հավատացողները, տեսնելով իրադարձությունները իրական լույսի ներքո, որոնք նա կանխատեսել էր, պետք է բարձրացնեն իրենց գլուխները հույսով և ցնծությամբ, քանի որ մոտ է նրանց ազատման ժամանակը, ինչպես նաև ամբողջ մարդկության ազատման ժամանակը մեղքից ու մահից:

Թշնամիների վերացումը

Քրիստոսի թագավորության մասին իր ոգեշունչ մարգարեությունում Պողոս առաքյալն ասում էր, որ Քրիստոսը պետք է թագավորի, մինչև որ Աստված չի տապալի բոլոր թշնամիներին Իր ոտքերի տակ, և որ վերջին թշնամին, որը կվերանա, մահն է, (Ա Կորնթացիս 15:24-26) այսինքն, որ Քրիստոսի թագավորության նպատակներից մեկը Աստծո, մարդու և արդարության թշնամիների վերացումն է: Քանի որ մահը կլինի թշնամիներից վերջինը, որը ենթակա կլինի վերացման Քրիստոսի կառավարման միջոցով, ապա կարելի է եզրակացնել, որ մյուս բոլոր թշնամիները կվերացվեն մինչև այդ ժամանակները, և առաջիններից՝ կլինեն երկրի ինքնասեր և մեղսավոր հաստատությունները, որոնք կանգնած են Քրիստոսի ճշմարտացի և արդարացի կառավարման դեմ: Նրանց վերացումն ենթադրում է ժամանակավոր նեղություններ և աղետներ մարդկանց համար, ովքեր գտնվում են այդ հաստատություններում: Դանիել մարգարեն նկարագրում էր այն՝ որպես «ծանր ժամանակներ, որը չի եղել այն ժամանակներից, երբ գոյություն ունեն մարդիկ» (Դանիել 12:1): Երկրորդ Սաղմոսի մարգարեությունում Հիսուսը հիշատակվում է՝ որպես երկրի մեծ Թագավոր, որին Աստված նշանակել է թագավորելու: Կանխագուշակվել էր, որ նախքան Նա կթագավորի Իր ուժով և փառքով, աշխարհի ժողովուրդները կապրեն «մեծ նեղության ժամանակ, ինչպիսին չի եղել աշխարհի սկզբից մինչև հիմա և ոչ էլ կլինի» (Մատթեոս 24:21): Ինչ վերաբերում է իրերի սահմանված

կարգի կանխագուշակված տապալմանը, ներկայիս սերունդն արդեն դարձել է Եվրոպայի շատ թագավորական տոհմերի անկման և դրան հաջորդող քաոսի վկա: Իր մարգարեությունում Հիսուսն ասել է, որ երկրի բոլոր ցեղերը կտագնապեն Իր ներկայության պատճառով, և մենք այսօր տեսնում ենք այդ տագնապի սկիզբը աշխարհի բոլոր երկրներում:

Շնորհակալություն Աստծուն, որ այդ տառապանքները կրում են ժամանակավոր բնույթ: Քրիստոսի վերադարձը նպատակ ուներ մահացող մարդկությանը բերելու խաղաղություն, ուրախություն և կյանք, և այդպիսին կլինի վերջնարդյունքը: Բայց դրա ձեռքբերման համար պետք է սահմանվի նոր կառավարում: Այն ենթադրում է այն կառավարման տապալում, որի դեպքում սատանան անտեսանելի էր:

Եթե դուք երբևէ հետաքրքրվել եք, թե ինչու աշխարհի քաղաքական գործիչները, օգտագործելով քսաներորդ դարի մշակույթի և կրթության բոլոր առկա ձեռքբերումները, չկարողացան կանգնեցնել աշխարհի՝ դեպի իր կործանումը տանող սրընթաց շարժումը, ապա պատասխանը գտնվում է Աստվածաշնչի մարգարեություններում: Այդ պատասխանը կայանում է նրանում, որ ամենագետ Աստված կանխապես գիտեր, թե ինչի կհասցնի մարդկային եսասիրությունը՝ ինքնավերացման, բայց անհրաժեշտ պահին աստվածային ուժը խառնվում է մարդկային գործերին, որն ուղղորդում է դեպքերի ընթացքը և նախապատրաստում է աշխարհը նոր կարգի, ու այդ

ուժն աստիճանաբար դրսևորվում է աստվածային Քրիստոսի անտեսանելի ներկայության միջոցով:

Բայց մեղքի և ինքնասեր հաստատությունների տապալումը, հաստատություններ, որոնք խրախուսում են կեղեքումը և պատերազմները, Քրիստոսի գործերի միայն սկիզբն է: Այն կարծես լինի վիրաբույժի դանակ, որն օգտագործվում է մահացող հիվանդի փրկության համար: Մոտավորապես վեց հազար տարվա ընթացքում մարդկային ցեղը մահանում էր: Մարդը ի վիճակի չէր գտնել միջոց մեղքի թունավոր խայթոցի դեմ: Այժմ Քրիստոսը՝ Մեծ Ամոքիչը, եկել է փոխելու ամեն ինչ, և առաջին անհրաժեշտ քայլը կայանում է նրանում, որպեսզի զետեղի մարդկությունը, այսինքն հիվանդին նոր միջավայրում արդարացի և առաքինի օրենքների ներքո: Նախապատրաստման գործընթացը առաջացնում է մարդկային իշխանության ճգնաժամ ամբողջ աշխարհում:

Վերջին օրերին

Եզակիները, ովքեր հասկանում են երկրի վրա տեղի ունեցողի իմաստը, նրանք են, ովքեր հավատով պատրաստ են ընդունել Աստծո Խոսքի վկայությունը: Նրանց համար Աստվածաշնչի մարգարեությունները հանդիսանում են՝ որպես փարոսի լույս, և նրանք ասում են, որ ներկայիս դարաշրջանը ամենամռայլն է բոլորից, որոնք հայտնի են մարդուն, և այն զիջում է նոր օրվա պանծալի լուսաբացին: Սա օր է, երբ առողջության, ուրախության, խաղաղության և կյանքի երանությունը կճառագի

Քրիստոսի՝ նոր թագավորի, փառահեղ աստվածային կառավարչի ներկայությունից, ով մարգարեաբար ներկայացված է որպես «Ճշմարտության Արև», որը կծագի «Իր ամոքիչ ճառագայթներով» (Մաղաքիա 4:2):

Մենք հավատում ենք, որ շուտով ամբողջ մարդկությունը կսկսի գիտակցել այն ուժը, որն ազդում է մարդկանց գործերի վրա և ճնշում է մարդկանց կողմից ստեղծված կառավարությունները: Սա պարզ կդառնա շնորհիվ մարդկային ջանքերի մշտական անհաջողությունների, որոնք ուղղված են աշխարհի շարունակականության և մարդկանց անվտանգության պահպանմանը:

Աշխարհի կառավարիչները նախկինի պես իրենց երևակայում են՝ որպես մարդկային ճակատագրերի տերեր, ենթադրելով, որ իրենց իմաստությունը և բանակների տպավորիչ հզորությունը կարող են ժողովուրդներին խաղաղություն պարտադրել:Խաղաղության հաստատման աստվածային ուղին դեռևս արհամարհվում է աշխարհի իմաստունների կողմից: Բայց այն բանին զուգընթաց, երբ նրանց ջանքերը մշտապես կավարտվեն անհաջողությամբ, նրանք կսկսեն բարձրացնել իրենց հայացքները՝ ամենաբարձր հեղինակությանը օգնության կանչելով: Մեր օրերը, որոնք հանդիսանում են այդ կարևոր ժամանակների զարգացում, որոնցում մենք ապրում ենք, նկարագրված են Միքիա մարգարեի կողմից: « Եվ վերջի օրերը պիտի լինի որ Տիրոջ տան սարը հաստատուն պիտի լինի սարերի գլխին, եվ բարձր պիտի լինի բլուրներից, եվ ժողովուրդները

հոսելով նրա մոտ պիտի գնան. Եվ շատ ազգեր պիտի գնան եվ ասեն. Եկէք վեր գնանք Տիրոջ սարը, եվ Յակոբի Աստծո տունը, որ նա մեզ սովորեցնէ իր ճանապարհները, եվ որ մենք գնանք նրա շավիղներովը, որովհետև Սիօնից պիտի դուրս գա օրէնքը, եվ Տիրոջ խօսքը՝ Երուսաղէմից: Եվ նա շատ ժողովուրդների մէջ դատաստան պիտի անէ, եվ զօրավոր ազգերին պիտի հանդիմանէ մինչև հեռուները. Եվ նրանք պէտք է կոտրատեն՝ իրանց սուրերը խոփեր շինեն, եվ իրանց նիզակները՝ էտոցներ, ազգ ազգի վրա սուր պիտի չ'բարձրացնէ, եվ այլ եւս պատերազմ պիտի չ'սովորեն: Այլ ամեն մարդ պիտի իր որթի տակին բնակուէ, եվ իր թզենու տակին, եվ վախեցնող պիտի չ'լինի, որովհետեւ Զօրաց Տիրոջ բերանն է ասել» (Միքիա 4:1-4):

Սա շատ սպառիչ և համոզիչ մարգարեություն է, որը ներկայիս իրադարձությունների լույսի ներքո շուտով, ի ուրախություն ամբողջ մարդկության, կիրականանա: Առաջին հերթին ուշադրություն դարձրեք ժամանակի սահմանման վրա.«Եվ կլինի վերջին օրերին»: «Վերջին օրեր» մարգարեական արտահայտությունը չի վերաբերում ճակատագրական վերջի կամ ամբողջ աշխարհի վերջի կամ երկրի վրա մարդկային գոյության ավարտի մասին: Այն վերաբերում է սատանայի կողմից մարդկանց կառավարման վերջին օրերին, մեղքի և մահվան վերջին օրերին, պատերազմների վերջին օրերին և բոլոր այն դժբախտությունների վերջին օրերին, որոնք ընկել են մարդկային ցեղի վրա Եդեմի ժամանակներից:

Ներկա ժամանակը

Այսօր մենք ապրում ենք մարգարեական «վերջին օրերում» և դարձել ենք որոշ դժբախտությունների վերացման վկաներ, որոնց պատճառով տառապում էր մարդկության մեծամասնությունը: Եվրոպայի կառավարող դինաստիաները, ովքեր շահագործում էին մարդկանց Աստծո անունից (բայց իրենց գործողություններով պարզորոշորեն ցույց էին տալիս, որ իրենք ներշնչված են սատանայի կողմից), արդեն գոյություն չունեն: Աստվածային մտադրությունների իրականացման ընթացքում մենք դառնում ենք տոտալիտար դիկտատուրաների՝ կոմունիստական, ֆաշիստական և այլն, ավարտի վկաներ: Մարդկությունը նույնպես կտեսնի պատերազմներից վերջինը, երբ կդրվի ավերիչ վախի ավարտը, որն այսօր լցված է մարդկանց սրտերում:

Այո, «վերջին օրերը», որոնք կանխագուշակվել են մարգարեություններում, փառահեղ ժամանակ է նրանում ապրողների համար: Դեպի Տիրոջ Տան լեռը, որը դրված է՝ լեռների գագաթներից վեր (ինչպես հռչակել է մարգարեն), կհոսեն ժողովուրդներ (Միքիա 4:1):Տիրոջ լեռը դա Տիրոջ արքայությունն է:Դանիելը իր մարգարեության երկրորդ գլխում խորհրդանշական կերպով համեմատում է երկրի մարդկային կառավարումը մարդակերպ արձանի հետ, իսկ այդ կառավարման ավարտը՝ որպես այդ արձանի փլուզում: Փլուզման գործիքը ցույց է տրված քարի տեսքով, որը հետո աճել է, մինչև որ չի դարձել մեծ լեռ և չի լցրել ամբողջ աշխարհը: Այս հետաքրքիր

մարգարեության իր մեկնաբանությունում Դանիելը մեզ ասում է, որ լեռը, որը լցրել է ամբողջ աշխարհը, Աստծո Արքայությունն է: (Դանիել 2:35, 44-45)

Միքիա մարգարեն նկարագրում է այդ լեռը, այսինքն Աստծո Արքայությունը, որպես Աստծո Տան լեռ: Այդ Աստծո Տունը Աստծո կառավարիչ տուն է և կազմված է նրանցից, ում Գիրքը սահմանում է՝ որպես որդիների տուն: Նրանցից գլխավորը Հիսուսն է: Նրա հետ միասին կլինեն նրանք, ովքեր ընդունել են Նրա հետ տառապելու և մահանալու հրավերը: Նրանց տրված է խոստում, որ նրանք միասին կապրեն և կթագավորեն: Հենց այս տեսանկյունից Պողոս առաքյալն սփոփում է Ուսուցչի հետևորդներին, ասելով «Նույն ինքն Հոգին վկայություն է տալիս մեր հոգու հետ, որ մենք Աստուծոյ որդիք ենք: Եվ եթէ որդիք՝ ապա ժառանգներ էլ, Աստուծոյ ժառանգներ եվ Քրիստոսի ժառանգակիցներ. որ եթէ նրա չարչարանքներին կցորդ ենք՝ փառքին էլ մասնակից լինինք» (Հռովմեացիս 8:16,17):

Հրաշագործ աստվածային ուժը երաշխավորում է այս նոր կառավարման հաջողությունը: Սատանան կարծում էր, որ ինքը սպանել է Քրիստոսին՝ աշխարհի Իշխանին և Արքայից արքային, բայց աստվածային ուժը հարություն է տվել Քրիստոսին մահացածներից: Նրանք, ովքեր տառապել և մահացել են Նրա հետ, հարություն կառնեն մահացածներից «առաջին հարությունում» (ինչպես դա սահմանում է Սուրբ Գիրքը), որպեսզի Քրիստոսի հետ ապրեն և թագավորեն:(Հայտնություն 20:6)

Քրիստոսի թագավորության հաղթական իշխանությունը նկարագրող մարգարեությունում Եսային մեզ ասում է, որ «Զօրաց Տիրոջ նախանձը պիտի անէ այս» (Եսայիա 9:7) : Եթե մեզ հայտնի է, որ Աստծո ուժը արդեն մահացածներից հարություն է տվել Արքայից արքային, և որ այդ աստվածային ուժը նույն ձևով օգտագործվել է, որպեսզի կյանք վերադարձնի նրա թագավորակիցներին, ապա կարո՞ղ ենք մենք կասկածել Աստծո՝ Նրա միջոցով Իր բարի մտադրությունները կատարելու կարողության մեջ: Իհարկե, ոչ:

Լեռների գագաթներից վեր

Եկեք տեսնենք, թե այլ ինչ բան է խոստացվել: Միքիա մարգարեն ասում է, որ Աստծո այդ կառավարիչ տունը սահմանվել է լեռներին կամ թագավորություններին գլխավորելու համար, այսինքն այն կզբաղեցնի առաջատար դիրք բոլոր ժողովուրդների գործերում, քանի որ ինչպես հաստատում է Եսային. «Նրա իշխանությունը շատացնելուն և խաղաղությանը վերջ չկա» (Եսայի 9:7):

«Եվ ժողովուրդները հոսելով նրա մոտ պիտի գնան»,- շարունակում է Միքիան իր մարգարեությունը (Միքիա 4:2): Մարդկությունը արդեն նման երևույթ ապրել է. երբ իմպերիալիստական կառավարությունները ձգտում էին ընդլայնել իրենց ազդեցությունը այլ ժողովուրդների վրա, շատերը ապաստան էին որոնում այլ երկրներում: Բայց այդպես չի լինի Քրիստոսի թագավորությունում: Այն բանին զուգընթաց, երբ

մարդիկ կտեղեկանան նրա իշխանության ընդլայնման մասին, նրանք, ինչպես հռչակում է մարգարեն, դեպի նա կհոսեն:

Նկարագրելով հետագա մանրամասները՝ մարգարեությունը շարունակում է. «Եվ շատ ազգեր պիտի գնան եվ ասեն. Եկեք վեր գնանք Տիրոջ սարը, որ նա սորովորեցնէ իր ճանապարհները, եվ որ մենք գնանք նրա շավիղներովը»: Ժամանակի հետ կիրականանա նաև մարգարեության այս մասը. Ժողովուրդները ճանաչում են իրենց սեփական ուղիների ապարդյունությունն և անխոհեմությունը: Եթե նախկինում նրանց՝ աշխարհը քաոսից և ավերումից փրկելու ցանկացած ջանք անհաջողության էր մատնվում, ապա այժմ նրանք պատրաստ կլինեն դիմել Նրան, Ով միակն է, որ կարող է տալ լուծում՝ Քրիստոսին, Ում մինչև այդ կճանաչեն որպես երկրի օրինական թագավոր:

Եվ երբ մարդիկ կցանկանան հետևել Աստծո ուղիներին, ինչպիսի՞ն կլինի արդյունքը: Ամենաերջանիկը: Մարգարեությունն ասում է, որ նրանք պետք է կոտրատեն՝ իրանց սուրերը խոփեր շինեն, եվ իրանց նիզակները՝ էտոցներ և այլևս չեն սովորի պատերազմել (Միքիա 4:3): Մարդկային իմաստությունը միշտ պնդում է, որ խաղաղությունն պահպանելու միակ միջոցը պատերազմին պատրաստ լինելն է, բայց այդ հաստատումը կհերքվի երկրի նոր թագավորի կողմից: Երբ ժողովուրդները ենթարկվեն թագավորության օրենքների լուսավորող ազդեցությանը, երկրի ռեսուրսները, որոնք նախկինում օգտագործվում էին ռազմական հզորության պահպանման

համար, կօգտագործվեն մարդկանց կենսական պահանջների ապահովման համար:

Երբեք չեն սովորի պատերազմել: Մտածեք, թե մարդկային հայացքների և գործողությունների որքան հսկայական փոփոխություններ են ենթադրվում այս սակավաթիվ խոսքերում: Կչեղարկվեն բանակային զորակոչերը: Վերջապես բոլոր ժողովուրդների մայրերը վստահ կլինեն, որ իրենք իրենց որդիներին չեն դաստիարակում պատերազմի համար: Կվերանա միլիտարիզմը իր բոլոր անկերպար ձևերով: Վախը կվերանա մարդկային սրտերից, քանի որ բոլորը կհասկանան, որ եթե ժողովուրդները չեն սովորում պատերազմել, ապա իրենք չեն ներքաշվի պատերազմների մեջ:

Որթատունկի ու թզենու տակ

Քանի որ ժողովուրդները կճանաչեն խաղաղության և արդարության ուղիները և կհետևեն նրանց, նրանք կապահովեն իրենց տնտեսական կայունությունը: Դրա հանդեպ մեզ վստահություն է տալիս մարգարեության գեղեցիկ պատկերի նկարագրությունը, երբ յուրաքանչյուր մարդ կնստի իր որթատունկի ու իր թզենու տակ (Միքիա 4:4): Սա ևս մեկ միջոց է մեզ ասելու, որ Քրիստոսի թագավորության իշխանության ներքո հողերը բոլորին հասանելի կլինեն, և որ յուրաքանչյուրի՝ այս ռեսուրսներում իր մասնաբաժինը ունենալու իրավունքը կերաշխավորվի աստվածային Թագավորության օրենքներով: Իսկ եթե հենց այդպես լինի, ապա մարգարեությունը ավելացնում

է. «Ոչ ոք նրանց չի վախեցնի»: Գոհություն Աստծուն վախից այդ ազատության համար:

Ոչ ոք չի վախենա: Ագրեսիայի վախը այսօր բոլոր մարդկանց է հետապնդում, և այդ վախը չի սահմանափակվում այլ ժողովուրդների կողմից հնարավոր կամ իրական ագրեսիայով: Տնտեսական ագրեսիան, որն առաջացնում է գնաճ, մարդկանց մի հսկայական զանգվածի պատճառում է նույնքան տառապանք: Այսպիսով, վախը, որը առաջանում է տարբեր բնագավառներում մարդկանց միջև հարաբերություններում անմարդկայնության պատճառով, շարունակում է քանդել խաղաղության և ուրախության ժառանգությունը, որի նկատմամբ իրավունք ունի յուրաքանչյուր մարդկային էակ, ում նախածնողները ստեղծվել են Աստծո պատկերով: Քրիստոսի թագավորության օրենքների պայմաններում այդ իրավունքը կվերադառնա, և ոչ ոք վախի չի ենթարկվի:

Մահվան վերացումը

Աշխարհն առանց պատերազմի և պատերազմի հանդեպ վախի էականորեն ավելի լավ կլինի այն աշխարհից, որն այսօր մոտենում է իր ավարտին: Եվ եթե մենք դրան ավելացնենք բոլորի համար տնտեսական կայունության պարտադրականությունը, ապա կստանանք աշխարհ, որի մասին երազել են փիլիսոփաները, բայց որը նրանք չէին կարող ստեղծել: Բայց դեռևս մնում են վախի մնացած տեսակները՝ ինչպես խուսափել հիվանդությունից, տառապանքներից:

Այո, դեռևս մնում է վախը մահվան հանդեպ (Միջնադարի անհեթեթ ուսմունքների պատճառով), վախ այն բանի նկատմամբ, ինչ է սպասում մարդուն մահվանից հետո: Նախկինի պես դեռ անհրաժեշտ են հիվանդանոցներ, բժիշկներ և թաղման բյուրոներ: Բայց գոհություն Աստծուն Նրա Խոսքի այն խոստումների համար, որոնք ասում են մեզ, որ անգամ հիվանդություններն ու մահը բոլոր ուղեկցող տառապանքների հետ մեկտեղ կվերանան Քրիստոսի թագավորության ժամանակ:

Մենք արդեն նշել ենք Պողոս առաքյալի համոզիչ խոսքերն այն մասին, որ Աստծո թագավորությունում մահը կվերանա: Այժմ դիմենք Եսայու 25:6-9 մարգարեությանը:Այդ մարգարեությունում, ինչպես նաև Միքիայի մարգարությունում, Քրիստոսի թագավորությունը խորհրդանշորեն ներկայացված է լեռան տեսքով, և մեզ ասված է, որ այդ լեռան վրա մահը կկլանվի հավիտյան, և «Եհովա Տերը կսրբե արտասուքը բոլորի երեսից…Եվ կասեն այդ օրը. ահա մեր Աստվածը որին մենք հուսացել ենք… Ուրախանալու եվ ցնծալու ենք նրա փրկությունովը»:

Մարդկային ցեղի համար փրկության այդ հույսի մասին խոսում է նաև Պետրոս առաքյալը: Իր մարգարեությունում նա պատմում է Քրիստոսի երկրորդ ներկայության նպատակի մասին, որը նա նկարագրում է որպես «Ամեն բաների հաստատվելու ժամանակները, որոնց համար խօսեց Աստված իր բոլոր սուրբ մարգարէների բերանովը» (Գործք առաքելոց 3:19-21): Մենք իրապես ուրախ ենք իմանալ, որ երկրորդ գալստյան նպատակը

ոչ թե ամենի ավերումն է, ներառյալ երկիրը, այլ ամենի վերականգնումը և վերադարձը, որը կորսվել էր մեր նախահոր՝ Ադամի անհնազանդության պատճառով: Այն ենթադրում է առողջության վերադարձ ապրողների համար, ինչպես նաև մահացածների հարություն:

Քրիստոսի երկրորդ ներկայությունն արդեն դրսևորվում է իրերի ներկա չար կարգի ավերման մեջ՝ նախապատրաստելով Նրա՝ արդարության և սիրո կառավարումը: Բայց սա միայն եսասիրական մարդկային հաստատությունների ավերում է: Մարդկային ցեղը (կենդանիներն ու մահացածները, եթե նրանք հնազանդվեն Աստծո օրենքներին) նորից կլինի այնպիսին, ինչպիսին եղել է մինչև մեղսագործությունը: Մարդը կորցրել է տունը ոչ թե երկնքում, այլ երկրում: Երկիրը ստեղծվել է մարդու համար, և երբ մարդը ստեղծվել է, նա ստացել է երկիրը՝ որպես սեփականություն: Բայց այդ սեփականությունը, ինչպես և հավերժական կյանքը կորսվել են մեղսագործության արդյունքում: Կորսված դրախտը կվերածնվի, և դրանում է կայանում վերականգնման գործը, որը Պետրոս առաքյալի կողմից նկարագրվել է՝ որպես «Ամեն բաների հաստատվելու ժամանակներ»: Պետրոս առաքյալն հայտարարում է, որ Աստծո այդ մեծ մտադրությունը կանխագուշակվել է Իր սուրբ մարգարեների կողմից աշխարհի սկզբից ի վեր: Այդ մարգարեական վկայությունների օրինակներից մեկը եղել է Աստծո խոստումը Աբրահամին:

Եվս մեկ մարգարեական խոսք, որը նկարագրում է Քրիստոսի թագավորության կառավարման ներքո մարդկանց համար օրհնության վերականգնումը, մեր կողմից արդեն նշվել է. այն օրհնված խոստում է, որ մահը կկլանվի հաղթանակի կողմից, և որ Աստված կսրբի արցունքները բոլորի երեսից: Մտածեք, թե այդ ժամանակ մարդկային կյանքի ինչպիսի փոփոխություններ տեղի կունենան: Աստված կսրբի մարդկանց արցունքները՝ վերացնելով նրանց վշտի պատճառները. մտածեք, թե որքան պատճառներ են վիշտ առաջացնում ներկայիս աշխարհում, և ինչ կլինի, եթե նրանք բոլորը մարդկության համար վերանան:

Բոլոր ազգերի ցանկալիքը

Եվս մեկ Աստծո մարգարե, նկարագրելով վերականգնման ժամանակները, հաստատել է, որ «կգա բոլոր ազգերի ցանկալիքը»(Անգե 2:7): Բոլոր ժողովուրդները խաղաղություն են երազում. նրանք ցանկանում են իրենց ապահովել ագրեսիայից, և Դավիթ մարգարեն հայտարարել է երկրի նոր թագավորի՝ Հիսուս Քրիստոսի մասին. «Նա իրավունք անէ ժողովրդի աղքատներին. Խեղճերի որդիքը փրկէ եվ զրկողներին ջարդէ» (Սաղմոս 72:4):

Վերականգման մեկ այլ խոստման մեջ Եսայիա մարգարեն խոստանում է, որ այդ ժամանակ՝ Քրիստոսի ու Նրա եկեղեցու կառավարման շրջանում «Կաղը եղջերուի պէս պիտի ցատկոտէ ու համրին լեզուն օրհնություն պիտի երգէ, կույրերի աչքերը պիտի բացվին ու խուլերի ականջները պիտի բացվին» (Եսայիա 35:5-6): Սա անկասկած նաև վերաբերում է նաև նրանց, ովքեր խուլ և

կույր են Տիրոջ խոսքերի և գործերի հանդեպ: Կան այդպիսի միլիոնավոր մարդիկ, և Պողոս առաքյալն մեզ ասում է, որ այս աշխարհի աստվածը՝ սատանան, կուրացրել է անհավատների սրտերը, որպեսզի նրանք չիմանան, չսիրեն և չգովաբանեն սիրո իրական Աստծուն (Բ կորնթացիս 4:4):

Եվս մեկ Աստծո մարգարե, նկարագրելով վերականգնման օրհնությունները մեկ այլ տեսանկյունից, ասում է Քրիստոսի հազարամյա թագավորության մասին, որում «երկիրը պիտի լցվի Տիրոջ փառքի գիտությամբ, ինչպէս որ ջրերը ծածկում են ծովը» (Ամբակում 2:14): Մարդիկ այլևս չեն երկրպագի տարբեր աստվածների, և չեն հետևի կոնֆլիկտի մեջ գտնվող դավանանքների: Դրա մասին հիշատակում է ևս մեկ աստվածաշնչային մարգարեություն. Աստված կտա «ժողովուրդներին մաքուր շուրթեր, որպեսզի ամէնքը Տէրոջ անունը կանչեն և միաբանորեն ծառայեն Նրան» (Սոփոնիա 3:9): Այդ ժամանակ մարդիկ ազատ կլինեն սիրո իրական Աստծո երկրպագության և ամբողջ սրտով ու ճշմարիտ հասկացողությամբ նրան ծառայելու մեջ:

Հայտնություն Գրքում մենք գտնում ենք ևս մեկ օրհնությունների հոյակապ խոստում, որոնք կտրվեն մարդկանց Քրիստոսի թագավորության ժամանակ: Նա հայտնում է, որ այդ ժամանակ «մահը այլևս չի լինի, ոչ սուգ, եվ ոչ աղաղակ. Եվ ոչ ցավ այլևս չի լինի» (Հայտնություն 21:4): Դժվար է պատկերացնել աշխարհ, որում չկա մահ, բայց Աստված խոստացել է, որ այդպես կլինի, և մենք հավատում ենք դրան, և այն մեզ քաջություն կտա

խոսել դրա մասին: Եթե նման խոստումը ելներ Աստծուց սակավ հզոր մեկից, մենք արդարացիորեն կկասկածեինք: Բայց Արարիչը կարող է իրականացնել այդպիսի խոստումներ, քանի որ Նա կյանքի աղբյուր է: «Որովհետև մենք նրանով ենք ապրում և շարժվում և կանք» (Գործք առաքելոց 17:28):

Դժվար է հասկանալ, թե ինչն է մեզ օգնում ապրել, և ինչն է մեզ շարժվելու ուժ տալիս, բայց Աստված գիտի դա, և նա լիառատությամբ կարող է բոլորին տալ հավերժ կյանք, ով կենթարկվի Քրիստոսի թագավորության օրենքներին: Հենց դա է Նա խոստացել, որ կկատարի: Այդ նպատակին է ծառայում Քրիստոսի վերադարձը և Նրա թագավորության հաստատումը: Սակայն Սուրբ Գիրքը հաստատում է, որ ցանկացածը, ով այդ ժամանակների բարենպաստ պայմաններում կհրաժարվի հավատալ և հնազանդվել, «կոչնչացվի ժողովրդի միջից»(Գործք առաքելոց 3:23): Հավերժ կյանքը կտրվի միայն նրանց, ովքեր կդրսևորեն հավատ և հնազանդություն:

Հույսի ուղերձ

Սա պանծալի հույս է, որն այսօր կարող է առաջարկվել անհանգիստ և վախեցած աշխարհի մարդկանց: Սա պանծալի հույս է, և այն հռչակելով, մենք հետևում ենք մարգարեի խորհրդին, ով գրել է «Ասեցէք թուլասիրտներին, Ուժովացէք, մի վախենաք, ահա ձեր Աստվածը գալիս է վրէժ առնելու, Աստծո հատուցումով է գալիս նա եվ նա ձեզ փրկելու է» (Եսայիա 35:4):

Մարգարեությունում մեր օրերին տրված նկարագրական անուններից մեկը Վրեժխնդրության օրն է: Դա այն ժամանակն է, երբ Աստծո արդարացի ցասումը դրսևորվում է մեղքի և կեղեքման հին համակարգերի և հաստատությունների տապալման մեջ: Այն դեպքում, երբ ներկայիս չար աշխարհի արմատախիլ արվելու արդյունքում մարդիկ անհանգստություն և վախ են ապրում, Աստծո վերջնական նպատակը հանդիսանում է մարդկանց՝ Քրիստոսի թագավորության սահմանման միջոցով մեղքից և մահից փրկությունը: Դրա համար էլ մենք այժմ վախով լցված աշխարհին «Մի վախեցիր» ասելու հնարավորություն ունենք, քանի որ աստվածային միջամտությունը մարդկային գործերին շուտով կբերի խաղաղություն, առողջություն և կյանք, ինչպես նաև երկրի բոլոր սերունդների հավերժ փրկության հնարավորություն: